ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/54

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 18.06.2020թ.),

Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 18.06.2020թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար տարբերանշանների, կոճակների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից

17.06.2020թ. ներկայացված (17.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/54 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.06.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է տարբերանշանների, կոճակների ձեռքբերման նպատակով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

www.gnumner.am համացանցային կայքում 13.05.2020թ. հրապարակված՝ Ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին 12.05.2020թ. ընդունված որոշման հայտարարության համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգի մի շարք չափաբաժիններով հայտարարվել է ընտրված մասնակից և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանվել է անգործության 5 /հինգ/ օրյա ժամկետ (մինչև 18.05.2020թ. ներառյալ):

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, լինելով Ընթացակարգի 3, 4, 13, 14, 17, 19, 21, 22, 23, 25, 28 չափաբաժինների մասով ընտրված մասնակցի, չի ստացել Պատվիրատուի կողմից ուղարկված պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Այնուհետև, համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի՝ Ընթացակարգի 3, 4, 13, 14, 17, 19, 21, 22, 23, 25, 28 չափաբաժինների մասով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և չի կնքվել պայմանագիր, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը վերը նշված չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Հրավերի՝

9.2 կետի համաձայն՝ հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

9.3 կետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ընդ որում պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Տարբերանշանների, կոճակների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3, 4, 13, 14, 17, 19, 21, 22, 23, 25, 28 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Ավելին՝ այս ողջ ընթացքում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները բազմաթիվ անգամ զանգեր են կատարել Ընթացակարգի քարտուղարի հեռախոսահամարին, որպեսզի ստանան տեղեկատվություն պայմանագրի նախագծի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ստացել ենք պատասխան, որ այդ պահին հանձնաժողովի անդամներից ոմանք գտնվում են ինքնամեկուսացման մեջ և աշխատանքին վերադառնալուն պես կշարունակեն իրենց աշխատանքը:

Պատվիրատուն սահմանված կարգով և ժամկետում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին չի ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, որից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 3, 4, 13, 14, 17, 19, 21, 22, 23, 25, 28 չափաբաժինների մասով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և չի կնքվել պայմանագիր, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը վերը նշված չափաբաժինների մասով:

Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով, Հրավերի 9.2 և 9.3 կետերով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ…»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին.

1.Ընդունել որոշում՝ հանձնաժողովի 09.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Ընդունել որոշում՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3, 4, 13, 14, 17, 19, 21, 22, 23, 25, 28 մասով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը սահմանված կարգով ուղարկելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.06.2020թ. ժամը 10:20-ին և 01.07.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.06.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/1936-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (3,4,13,14,17,19,21,22,23,25,28)-րդ չափաբաժինների մասով 12.05.2020թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն: 21.05.2020թ. սահմանված կարգով համակարգի (armeps.am) միջոցով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է Մասնակցին: Սակայն, վերջինս ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, 09.06.2020թ. որոշեց մերժել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.06.2020թ. ժամը 10:20-ին և 01.07.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3.<u>«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն ԳԲՔԱ-ՆԳ-2020/54 բողոքի շրջանակներում ներգրավվել է որպես պարտադիր կողմ:

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 29.06.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան 26.06.2020թ. գրության՝ տեղեկացնում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում՝ 21/05/2020թ. պատվիրատուն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ մասնակցի կողմից համակարգում գրանցված vaghinak.yeghiazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին, «Ոչ ավտոմատ ծանուցման» եղանակով նամակ է ուղարկել, որի առաքումը ձախողվել է, քանի որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում էլեկտրոնային նամակի առավելագույն չափի սահմանափակումը 10MB է, իսկ այս դեպքում՝ էլեկտրոնային նամակի բովանդակության և կցագրված ֆայլի միասնական ծավալը եղել է թույլատրելիից մեծ:

Ոչ միայն մասնակիցը, այլ նաև գնահատող հանձնաժողովի մյուս անդամները ևս չեն ստացել առաքված էլեկտրոնային նամակը»:

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/54 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարբերանշանների, կոճակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12.05.2020թ. Ընկերությունը 3-րդ, 4-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Պատվիրատուն 21.05.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագրի նախագիծը՝ ծանոթանալու և օրենսդրությամբ սահմանված ժամկետում ու կարգով կնքելու նպատակով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մերժել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 17.06.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության 19.06.2020թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 26.06.2020թ. թիվ Ն/26-1/13109-2020 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո</u>՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է

պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարբերանշանների, կոճակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12.05.2020թ. Ընկերությունը 3-րդ, 4-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և 21.05.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցվել է՝ պայմանագրի նախագծին ծանոթանալու և օրենսդրությամբ սահմանված ժամկետում ու կարգով կնքելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը սահմանված կարգով և ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ու որակավորման ապահովումները, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, մերժել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.06.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/9283-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը՝ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրելու տեղեկատվություն՝ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով իրականացված ծանուցումների վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.06.2020թ. թիվ Ն/26-1/13109-2020 գրությամբ հայտնել է, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ վերջինիս հետ կնքվելիք պայմանագրի նախագծի հետ ծանոթանալու և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով կնքելու նպատակով, ***«Ոչ ավտոմատ ծանուցման» եղանակով մասնակցի կողմից համակարգում գրանցած vaghinak.yeghiazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ուղերձ նամակի առաքման գործընթաց է իրականացվել (կցվում է), որի առաքումը, սակայն, ձախողվել է՝ էլեկտրոնային նամակի բավանդակության և կցագրված ֆայլի՝ 7.45MB (կցվում է) միասնական ծավալի մեծ լինելու պատճառով (առավելագույն միասնական ծավալը՝ 10MB):***

Ընկերությունը 26.06.2020թ. ofeli.kirakosyan92@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին փոխանցված հաղորդագրության միջոցով ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 26.06.2020թ. թիվ 26-1/9235-2020 գրությունը՝ ուղղված Ընկերությանը և Պատվիրատուին, որի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը.

««Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 15/06/2020թ. գրությամբ բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս, ուսումնասիրելով համակարգում առկա տեղեկատվությունը, տեղեկացրել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գրության մեջ նշված ժամանակահատվածում՝ 21/05/2020թ. ժամը 18:41-ին պատվիրատուն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ վերջինիս հետ կնքվելիք պայմանագրի նախագծի հետ ծանոթանալու և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով կնքելու նպատակով, ***«Ոչ ավտոմատ ծանուցման» եղանակով մասնակցի կողմից համակարգում գրանցած vaghinak.yeghiazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ուղերձ նամակի առաքման գործընթաց է իրականացրել (կցվում է), որի առաքումը, սակայն, ձախողվել է՝ էլեկտրոնային նամակի բավանդակության և կցագրված ֆայլի՝ 7.45MB (կցվում է) միասնական ծավալի մեծ լինելու պատճառով (առավելագույն միասնական ծավալը՝ 10MB), որը վրիպել է վերոգրյալ ընթացակարգի քարտուղարի ուշադրությունից, քանի որ վերջինս, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի մյուս***

<u>անդամները ևս չեն ստացել առաքված էլեկտրոնային նամակը:</u>

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ պայմանագիրը կնքելու առաջարկը՝ պայմանագրի շնորհումը, էլեկտրոնային եղանակով մասնակցին տրամադրվել է 21/05/2020թ. ժամը 18:37-ին պատվիրատուի կողմից իրականացրած «Պայմանագրի շնորհում» առաջադրանքի միջոցով, որի արդյունքում մասնակիցը համակարգի իր կայք-էջում ստացել և 22/05/2020թ. ժամը 11:38-ին «Պատասխանել պայմանագրի շնորհմանը» առաջադրանքի միջոցով՝ էլեկտրոնային եղանակով ընդունել է իրեն շնորհված պայմանագիրը»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 15-րդ կետի համաձայն՝ «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն ԳԲՔԱ-ՆԳ-2020/54 բողոքի շրջանակներում ներգրավվել է որպես պարտադիր կողմ և 26.06.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/9596-2020 գրությամբ վերջինս տեղեկացվել է այդ մասին:

«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն 29.06.2020թ. գրությամբ հայտնել է, որ ***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում 21/05/2020թ. պատվիրատուն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ մասնակցի կողմից համակարգում գրանցված vaghinak.yeghiazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին «Ոչ ավտոմատ ծանուցման» եղանակով նամակ է ուղարկել, <u>որի առաքումը ձախողվել է, քանի որ ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգում էլեկտրոնային նամակի առավելագույն չափի սահմանափակումը 10MB է, իսկ այս դեպքում էլեկտրոնային նամակի բովանդակության և կցագրված ֆայլի միասնական ծավալը եղել է թույլատրելիից մեծ:</u>***

<u>Ոչ միայն մասնակիցը, այլ նաև գնահատող հանձնաժողովի մյուս անդամները ևս չեն ստացել առաքված էլեկտրոնային նամակը»:</u>

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունն իր կամքից անկախ՝ չստանալով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, փաստացի զրկվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիրը կնքելու իրավունքից:

Ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով Ընկերության շահը՝ գտնում եմ, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 17.06.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ գնահատող հանձնաժողովի 09.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել Պատվիրատուին սահմանված կարգով ծանուցել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով Ընթացակարգի 3-րդ, 4-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ և 28-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**